Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլ

Պատասխաններ - 9-րդ դասարան

1. Խոր աշուն էր: Արդեն **երրորդ** արևագալն էր, որ փորձառու որսորդը քառակուսի բարձունքի՝մացառներով քողարկված քարայրում սպասում էր՝ երբ անտառամերձ խորխորատում կխշխշան եղեգները, ու իր թաքստոցից դուրս կգա առաջին որսը:

Այդ օրը՝ **վաղորդայնին** միայն երևաց վագրը, նրա հետևից՝ կորյունը, և առաջացան դեպի **ժայռից** բխող սառնորակ աղբյուրը: Ջուր խմելիս վագրը գիրթ շրջվեց ու **անտառին** նայելիս խրոխտ հայացքը հանկարծ բևեռեց հանդիպակաց բարձրակարկառ լեռանը՝ ասես կանխազգալով մոտեցող վտանգը: Բայց անձավում ականակիր մութ էր. վագրը չէր կարող նկատել **որսորդին**:

Աստվա՜ծ իմ, որքա՜ն **գեղեցիկ** էր նա իր անվրդով վեհությամբ: Արևի փայլից ոսկևորված՝ ասես ճաճանչում էր, հիացնում իր շքեղ մուշտակի ճերմակ ու խարտյաշ գծերի ներդաշնակությամբ:

Ինչպե՜ս կարելի էր սպանել այդպիսի գեղեցկությունը:

Եվ որսորդը, (՝) բնության այդ հրաշքից կախարդված, իջեցրեց հրացանը:

2.խորը-խոր, բարձրունք-բարձունք, երևացին-երևաց,
խմելուց- խմելիս, լեռը- լեռանը, իրեն-իր

3. **մացառ**-փշոտ թփաբույս, **գիրթ**-կտրուկ, շեշտակի,
խորխորատ-վիհ,կիրճ,անդունդ, ձոր, վիրապ, **խրոխտ-** հպարտ, սեգ, համարձակ, հանդուգն,
խարտյաշ-դեղձան, ոսկեգույն, դեղին, **ականակիր**-շատ մութ, խավարչտին, խավարամած

4. <u>փորձ</u>+<u>առ</u>+<u>ու</u>, <u>քառ</u>+ա+<u>կուս</u>+<u>ի</u>, <u>սառն</u>+<u>որ</u>+<u>ակ</u>

5. **մացառներով քողարկված**, **ժայռից բխող**- որոշիչ, **հոծ անտառին նայելիս**-ժամ. պարագա
արևի փայլից ոսկևորված, բնության այդ հրաշքից կախարդված- ձևի պարագա
կանխազգալով... վտանգը, հիացնելով....բծերով- ձևի պարագա
նկատել որսորդին- ուղիղ խնդիր, **սպանել այդ գեղեցկությունը**- ենթակա

6. **երրորդ**-որոշիչ, **վաղորդայնին-** բացահայտիչ, **ժայռից**-անջատման խնդիր,
անտառին- հանգման. խնդիր, **գեղեցիկ**-ստորոգելի, **որսորդին**- ուղիղ խնդիր,

7. սպասում էր՝ երբ, երևաց վագրը, նրա հետևից, մութ էր. վագրը, ճաճանչում էր, հիացնում

8.**սիրտ տալ**-1.ոգևորել, քաջալերել, հուսադրել 2. մխիթարել, **սիրտը տալ**- մեկին նվիրվել

Գնահատման չափանիշներ- 9-րդ դասարան

Ամբողջ հարցաշարին տրվում է 50 միավոր, որից՝

1. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 8 միավոր
2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 6 միավոր
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 6 միավոր
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 3 միավոր
   Եթե արմատները և ածանցները ընդգծված չեն, կամ դրանցից մեկը սխալ է ընդգծված միավոր չի տրվում:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 4 միավոր
   Եթե շարահյուսական պաշտոնը նշված չէ, միավոր չի տրվում:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 7 միավոր
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 4 միավոր
8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 2 միավոր
9. Շարադրությանը տրվում է 10 միավոր: Ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1, կետադրականի համար՝ 0,5, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: